ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 27-26

«ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ «ՍԵՐՄԵՐԻ ՈՐԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՐՏԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «05» 02 2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հայկազ Նասիբյանի, ով գործում է նախարարության (այսուհետ՝ Պետական մարմին) կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Դավիթ Բաբայանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՕ-397-Ն օրենքը, ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումները (այսուհետ՝ Որոշում), 1059. Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրի 11003. «Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ» միջոցառմամբ՝ 2026 թվականի ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշման 1059. Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրի 11003. «Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ» միջոցառմամբ նախատեսված՝ գումարից **55,885.8 (հիսունհինգ միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 Հ-8 և տեքստային) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները, մնացորդը վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա դեկտեմբերի 25-ը ներառյալ:

2.4.9. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո մնացորդը, առաջացած տնտեսումները (խնայողությունները) կազմակերպությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, բայց ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը, որը ընդունված է համարվում՝ պետական մարմնի և կազմակերպության միջև կատարված աշխատանքների ընդունման վերաբերյալ հանձնաժողովի կողմից ներկայացված դրական եզրակացության առկայության դեպքում: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով

սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

Հանձնման-ընդունման ակտը ընդունված է համարվում միայն երկկողմ ստորագրման և համակարգող նախարարի տեղակալի կողմից ստորագրության առկայության դեպքում:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 5-ը ներկայացված ծախսերի կատարման հայտի (Ձև 1), հաշվարկ-բացատրագրի (Ձև 2) համապատասխան Ծրագրի ծախսերի նախահաշվի (հավելված 6) և հանձնման-ընդունման ակտի (հավելված N 4) ինչպես նաև համապատասխան հանձնաժողովի կողմից ներկայացված դրական եզրակացության (հավելված N 7) հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին:

5.2 Պայմանագրի 1.1 կետում նշված գումարից՝ մինչև **5,200.0 (հինգ միլիոն երկու հարյուր հազար)** ՀՀ դրամը, պետական մարմինը փոխանցում է կազմակերպության գանձապետական հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտերի հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի NN 1 և 5 հավելվածներում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև

պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո Կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագրի ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2. կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող

օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.4. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով՝ 18 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	**«Գյուղատնտեսական հետազոտությունների հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ**
Հասցե՝	**Հասցե՝**
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	**ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա**
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն	**ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն**
Հ/Հ 900011032183	**Հ/Հ 900018003849**
ՀՎՀՀ 02698604	**ՀՎՀՀ 00091693**
ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար՝	**«Գյուղատնտեսական հետազոտությունների հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝**
ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ	**ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ**
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
05. 02. 2026 թ. փետրվարի -ին
կնքված N 27-26 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման

Հ/Հ	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում, հազար տոննա	Իրավաբանական և ֆիզիկական անձանց միջոցով հանրապետություն ներկրվող, արտահանվող, ինչպես նաև հանրապետությունում արտադրվող գյուղատնտեսական մշակաբույսերի սերմերի ցանքային որակի ստուգում, որի նպատակն է ստուգել նմուշառված սերմերի որակը (ծլունակությունը, էներգիան, խոնավությունը, կենսունակությունը, 1000 հատիկի կշիռը և դասային համապատասխանությունը) և բացահայտել վնասատուների և հիվանդությունների առկայությունները: Յուրաքանչյուր տարի կազմակերպության լաբորատորիան ստուգում, գնահատում և փաստաթղթավորում է գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի ավելի քան 12 հազար տոննա սերմ: Աշխատանքներն իրականացվում են ՀՀ «Սերմերի և տնկանյութի մասին» օրենքի» և համապատասխան ենթաօրենսդրական ակտերով:	«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լաբորատորիան լաբորատոր փորձաքննություններ իրականացնելիս առաջնորդվում է հետևյալ չափորոշիչներով՝ 12036- նմուշների վերցման կարգի մասին 12037- մաքրության և տականքի 12038- ծլունակության 12039- կենսունակության 12041- խոնավության 12042- 1000 հատիկի կշռի 12044- հիվանդություններով վարակվածություն 12045- վնասատուներով բնակվածության 12046- որակի վկայականներ 12047- արբիտրաժային նմուշներ 11856- կարտոֆիլի սերմերից միջին նմուշ վերցնելու մասին և գյուղատնտեսական բոլոր	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ֆիտոսանիտարական վիճակի բարելավում լաբորատոր հետազոտություն անցած բարձրորակ սերմերի օգտագործման արդյունքում: Տարեկան 12 հազար տոննա բույսերի սերմերի որակի լաբորատոր փորձաքննություններ և փաստաթղթավորում:	30.12.2026	Ներկայացվում են եռամսյակային հաշվետվություններ ըստ նախապես պլանավորած աշխատանքների, ինչպես նաև տարեվերջյան հաշվետվություն: Տվյալ դեպքում նախատեսված է ըստ եռամսյակների իրականացնել՝ 2, 3, 3 և 4 հազար տոննա բույսերի սերմերի որակի լաբորատոր փորձաքննություններ և փաստաթղթավորում: Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:	28 185 800,00
2	Բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացում և դաշտային փորձարկումներ, հատ	Բույսերի նոր սորտերի փորձարկումների, ստուգիչ ցանքերի և դաշտային հետազոտությունների իրականացում, ՀՀ բնակլիմայական պայմաններին առավել հարմարվող, բարձր և որակյալ բերք ապահովող սորտերի փորձարկում, ՀՀ-ում բույսերի նոր սորտերի տնտեսական օգտակարության գնահատում, ՀՀ-ում բույսերի նոր սորտերի տնտեսական օգտակարության գնահատում, և տարբեր գյուղատնտեսական գոտիներում դրանց ներդրում: Սորտափորձարկումների անցկացումն ունի հազվադեպ նշանակություն նոր սորտերի շրջանացման և արտադրության մեջ ներդրման համար: Աշխատանքները իրականացվում են ՀՀ «Բույսերի սորտերի պահպանության մասին» 2017թ, դեկտեմբերի 8-ի օրենքով և ենթաօրենսդրական ակտերով:	Բույսերի սորտերի ստուգիչ ցանքերի և դաշտային հետազոտությունների պետական սորտափորձարկումների իրականացման համար կատարվում են հետևյալ գործողությունները՝ ստուգիչ հողամասի հիմնում սերմերի ցանքերի միջոցով սերմերի սորտային պատկանելության, մաքրությունը և սերմերի որակական հատկանիշների որոշում սերմացուի նույնականացում տվյալների ամփոփում:	Տարեկան կտրվածքով իրականացնել 100 բույսերի սորտերի ստուգիչ ցանքերի և դաշտային հետազոտությունների պետական սորտափորձարկումներ: Նշված աշխատանքները հիմք են հանդիսանում ունենալ առավել բերքատու, որակական բարձր ցուցանիշներ ունեցող սորտերի թարմացման, տնտեսապես օգտակար սորտերի գրանցման և շրջանացման համար:	30.12.2026	Ներկայացվում են եռամսյակային հաշվետվություններ ըստ նախապես պլանավորած աշխատանքների, ինչպես նաև տարեվերջյան հաշվետվություն: Տվյալ դեպքում նախատեսված է ըստ եռամսյակների իրականացնել՝ 20, 30, 30 և 20 հատ բույսերի սորտերի ստուգիչ ցանքերի և դաշտային հետազոտությունների պետական սորտափորձարկումներ: Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:	20 700 000,00
3	Բույսերի սորտերի պաշտոնական տարեկան տեղեկագրի ընթացիկ վարում, մշակում և հրապարակում, հատ	Բույսերի նոր սորտերի իրավական պահպանության կանոնակարգում, առաջնայնության ժամկետի սահմանում, բույսերի սորտերի պահպանություն, նորարարության փորձաքննության արդյունքների արձանագրում: Պաշտոնապես հրապարակվում են ոլորտում իրավահարաբերությունները կանոնակարգող օրենսդրական, ենթաօրենսդրական, ընթացակարգային, մեթոդական և այլ բնույթի փաստաթղթեր և դրանց մեկնաբանություններ:	Հայտերի ընդունում, սելեկցիոն նվաճումների անվանումների գրանցում, հայտերի վերաբերյալ ընդունված որոշումների հրապարակում իրավաբանական և ֆիզիկական անձանց անվանումների փոփոխություններ: Բույսերի սորտերի պահպանության կամ օգտագործման թույլտվության ավարտի արձանագրում հավաստագրում (լիցենզավորում) ընդհանուր տեղեկություններ- բույսերի սորտերի իրավական պաշտպանության փորձարկումների և օգտագործման մասին տեղեկություն:	Գյուղատնտեսության մեջ օգտագործվող սերմերի սորտերի պաշտոնական տարեկան 1 տեղեկագրի ընթացիկ վարում, մշակում և հրապարակում	30.12.2026	Տվյալ միջոցառման հաշվետվությունը ներկայացվում է տարեվերջին, հաշվի առնելով դրա առանձնահատկությունը: Մասնավորապես, հրապարակումը իրականացվում է տարեվերջին որտեղ ամփոփվում են տարվա ընթացքում իրականացված համապատասխան աշխատանքները:	500 000.00
4	Բույսերի սորտերի պետական տարեկան գրանցամատյանի ընթացիկ վարում, մշակում և հրապարակում, հատ	Հանդիսանում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական փաստաթուղթ, որը հրապարակվում է համաձայն ՀՀ «Բույսերի սորտերի պահպանության մասին» 2017թ, դեկտեմբերի 8-ի օրենքի: Պետական գրանցամատյանում հաշվառված են բույսերի այն սորտերը, որոնք արտոնագրված են և բազմամյա փորձերի արդյունքների հիման վրա երաշխավորված ՀՀ գյուղատնտեսական տարբեր գոտիներում մշակության համար:	ՀՀ «Բույսերի սորտերի պահպանության մասին» 2017թ, դեկտեմբերի 8-ի օրենքով և ենթաօրենսդրական ակտերով նախատեսված գործողություններն են՝ Սորտերի և հիբրիդների մասին ծածկագրված տեղեկությունների ներկայացում: Բույսերի նոր սորտերի խմբավորում ըստ UPOV-ի, Մշակաբույսերի ներկայացում՝ հայերեն, բտտիրներեն, ռուսերեն անվանումներով: Տեղեկությունների տրամադրում՝ սորտերի և հիբրիդների գրանցման ժամկետների վերաբերյալ: ՀՀ բնագրաղատնտեսական գոտիներում սորտերի օգտագործման երաշխավորումը:	Թվով 1 գրանցամատյանի վարում՝ միամյա մշակաբույսերի համար 20 տարի, բազմամյաների համար 30 տարի՝ համաձայն ՀՀ «Բույսերի սորտերի պահպանության մասին» 2017թ, դեկտեմբերի 8-ի օրենքի դրույթների:	30.12.2026	Տվյալ միջոցառման հաշվետվությունը ներկայացվում է տարեվերջին, հաշվի առնելով դրա առանձնահատկությունը: Մասնավորապես, հրապարակումը իրականացվում է տարեվերջին որտեղ ամփոփվում են տարվա ընթացքում իրականացված համապատասխան աշխատանքները:	500 000.00
5	Բույսերի տնկիների դաշտային հետազոտություններ և փաստաթղթավորում, հատ	Տնկանյութի հավաստագրման նպատակով իրականացվում է հավաստագրում սկսելու հայտի փորձաքննություն, տնկարանային դաշտերի հետազոտություն (ապրորացիա), տնկանյութի արտադրության ժամանակ պետական ստանդարտների և այլ նորմատիվ փաստաթղթերի պահանջների պահպանման վերահսկում, նմուշառում և տնկանյութի ապրանքային որակների փորձարկում և հավաստագրի տրամադրում:Բուծողի մտավոր իրավունքների պաշտպանությունը ապահովելու, մշակաբույսի սորտի նկատմամբ նրա բացառիկ իրավունքները հավաստելու և արտոնագիր տրամադրելու նպատակով իրականացվում են արտոնագրի հայտի փորձաքննություն և անցկացվում են սորտի տարբերակիչ հատկանիշի, միատարրության և կայունության ստուգման դաշտային հետազոտություններ:	Միմյանց հետ փոխկապակցված մի շարք գործընթացների իրականացում, ըստ պտղատեսակների դաշտային հետազոտությունների մեթոդիկայի և ուղեցույցի, տնկանյութի գնահատման չափորոշիչների մշակում, դաշտային հետազոտությունների իրականացում:	Հայաստանի Հանրապետությունում կիրականացվի տնկանյութի հավաստագրում, թվով 5-ը:	30.12.2026	Ներկայացվում են եռամսյակային հաշվետվություններ ըստ նախապես պլանավորած աշխատանքների, ինչպես նաև տարեվերջյան հաշվետվություն: Տվյալ դեպքում նախատեսված է ըստ եռամսյակների իրականացնել՝ 5 հատ որակի դաշտային հետազոտողների հավատարմագրման գործընթացի կազմակերպում Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:	6 000 000.00
			ԸՆԴԱՄԵՆԸ				55 885 800,00

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մնացականյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032183
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր բարտուղար՝
ԱՇԽԵՆ ՆԱՍԻԲՅԱՆ

Կ.Տ.

Կատարող

«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018003649
ՀՎՀՀ 00091693
Տնօրեն՝
ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 2
2026 թ. փետրվարի 05 -ին
կնքված N 27-26 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

Ծրագրի անվանում	Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ
Դրամաշնորհի համար	
Դրամաշնորհատու կազմակերպություն	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.01.2026 - 30.12.2026
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Դավիթ Բաբայան, տնօրեն

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների,

2.3 Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության

2.4 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են

2.5 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.6 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային

Հավելված 3
2026 թ. փետրվարի 05 -ին
կնքված N 27-26 - պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ հազ. դրամ (աճողական)

Միջոցառման														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
		Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ	14 200,00	14 200,00	14 200,00	28 900,00	28 900,00	28 900,00	44 800,00	44 800,00	44 800,00	55 885,80	55 885,80	55 885,80

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032183
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝
ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Կ.Տ.

Կատարող

«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018003849
ՀՎՀՀ 00091693
Տնօրեն՝
ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 4
2026 թ. փետրվարի 05 -ին
կնքված N 27-26- պայմանագրի

Կատարող **Պատվիրատու**

ԱԿՏ №

ՊԱՅՄԱՆԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2026 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «փետրվար» 2026 թ.

Պայմանագրի համարը՝
Պետական մարմինը և Կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված № _ _ _ _ _ հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանգրի շրջանակներում Կազմակերպությունը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

Իրականացված միջոցառման							
		արդյունքը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը (հազ. ՀՀ դրամ)	վճարման ժամեկտը (ըստ պայմանագրի)
անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց՝ Ծառայությունն ընդունեց՝

Հավելված 5
2026 թ. փետրվարի 05 -ին
կնքված N 27-26 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝	***ՀՀ էկոնոմիկայի նախարարություն***
Կազմակերպության անվանումը՝	***«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ***
Ծրագրի անվանումը	**Գյուղատնտեսության մեջ օգտագործվող սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների ծառայություններ,**

Ծրագրի համառոտ նկարագրություն	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի ընթացքում (աճողական)			
		Ի եռամսյակ	Ի կիսամյակ	ինն ամիս	տարի
		քանակը	քանակը	քանակը	քանակը
1	2	3	4	5	6
Գյուղատնտեսական նշանակության մշակաբույսերի նոր սորտերի հայտերի փաստաթղթային վերլուծություններ, սորտափորձարկումների պլանավորում, դաշտային հետազոտությունների կազմակերպում, սերմերի որակական ցուցանիշների լաբորատոր հետազոտությունների իրականացում, բույսերի նոր սորտերի նկարագրությունների կազմում, շրջանացման և օգտագործման թույլտվության նպատակով առաջարկությունների մշակում, պետական գրանցամատյանների վարում, օրիգինատորների հաշվառում, նոր սորտերի մշակության նկարագրությունների և սերմնաբուծության զարգացման գիտական աշխատանքների վարում, դրանց հրատարակություն:	Բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում, հազար տոննա		5		12
	Բույսերի նոր սորտերի ստուգիչ ցանքերի իրականացում և դաշտային փորձարկումներ, հատ		50		100
	Բույսերի սորտերի պաշտոնական տարեկան տեղեկագրի ընթացիկ վարում, մշակում և հրապարակում, հատ				1
	Բույսերի սորտերի պետական տարեկան գրանցամատյանի ընթացիկ վարում, մշակում և հրապարակում, հատ				1
	Բույսերի տնկիների դաշտային հետազոտություններ և փաստաթղթավորում, հատ		2		5

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032183
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝
ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Կ.Տ.

Կատարող

«Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018003849
ՀՎՀՀ 00091693
Տնօրեն՝
ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 6

2026 թ. փետրվարի 05 -ին
կնքված N 27-26 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

NN	Ծրագրի գծով իրականացվող ծախսերը (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարեկան
	Անվանումները				
					Գումարը /հազ. դրամ/
1	**1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ**	***11850,0***	***23700,0***	***37095,8***	***47400,0***
	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	11850	23700	37095,8	47400
	2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ	***2210,0***	***5020,0***	***7400,2***	***8178,8***
	2.1. Շարունակական ծախսեր	***550,0***	***1406,0***	***1639,0***	***2184,0***
	- Էներգետիկ ծառայություններ	400	900	950	1400
	- Կոմունալ ծառայություններ	0	6	9	12
	- Կապի ծառայություններ	100	420	600	692
	- Ապահովագրական ծախսեր	50	80	80	80
	2.2. Ծառայողական գործուղումների գծով ծախսեր	***310,0***	***610,0***	***700,0***	***700,0***
	- Ներքին գործուղումներ	310	610	700	700
	2.3. Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	***200,0***	***485,0***	***925,0***	***925,0***
	- Համակարգչային ծառայություններ		125	125	125
	- Տեղեկատվական ծառայություններ	200	360	500	500
	- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	0	0	300	300
	2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	***70,0***	***300,0***	***530,0***	***587,6***
	- Մասնագիտական ծառայություններ	70	300	530	587,6
	2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և	***150,0***	***400,0***	***500,0***	***500,0***
	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և	150	400	500	500
	2.6. Նյութեր (ապրանքներ)	***930,0***	***1819,0***	***3106,2***	***3282,2***
	- Գրասենյակային նյութեր և հագուստ	200	300	580	680
	- Տրանսպորտային նյութեր	400	784	964	990
	- Առողջապահական և լաբորատոր նյութեր	130	225	752,2	800
	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	200	510	810	812,2
	7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	***140,0***	***180,0***	***304,0***	***307,0***
	7.2. Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք	***140,0***	***140,0***	***264,0***	***267,0***
	- Այլ հարկեր	90	90	100	100
	- Պարտադիր վճարներ	50	50	164	167
	7.6. Այլ ծախսեր	***0,0***	***40,0***	***40,0***	***40,0***
	- Այլ ծախսեր	0	40	40	40
	ԸՆԴԱՄԵՆԸ	***14200,0***	***28900,0***	***44800,0***	***55885,8***

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի
նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
Հ/Հ 900011032183
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղար՝
ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ

Կ.Տ.

Կատարող

«Գյուղատնտեսական հետազոտությունների և
հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝
ք. Երևան, Մամիկոնյանց 39 ա
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018003849
ՀՎՀՀ 00091693

Տնօրեն՝
ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 7
2026 թ. փետրվարի 05 -ին
կնքված N 27-26 պայմանագրի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«_____»«_____» 20 ___ թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____»«_____» 20 ___ թ.

Պայմանագրի համարը _____

Պատվիրատուի անվանումը _____

Պայմանագրի կողմի անվանումը _____

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները

N	Իրականացված միջոցառման					
	անվանումը	Նկարագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը	
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

_____

_____

_____

_____

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն:
(դրական/բացասական)

Հանձնաժողովի նախագահ՝ _____

անուն-ազգանուն, ստորագրություն «____»«_____» 20___ թ.

անդամներ՝ _____

անուն-ազգանուն, ստորագրություն «____»«_____» 20___ թ.

Ձեվ 1
2026 թ. փետրվարի 05 -ին
կնքված N27-26 պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՅՏ №
ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ կազմակերպության անվանումը

_____ հաշվի համարը

բաժին **խումբ** _____ **դաս** _____ **ծածկագիր** _____

_____ 2026 թ.
օր ամիս տարի

_____ ծրագրի անվանումը

Հ/Հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

Կ.Տ.

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

Ձեվ 2
2026 թ. փետրվարի -ին
կնքված N - պայմանագրի

ՀԱՇՎԱՐԿ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ծրագրի անվանում	Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ
Հաշվետու ժամանակահատված	

ԲԱՑԱՏՐԱԳԻՐԸ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Թվարկել նախատեսված հոդվածները և տալ բացատրություն յուրաքանչյուր հոդվածի համար:

Թվարկել նախատեսված հոդվածները և տալ բացատրություն յուրաքանչյուր հոդվածի համար:

ՏՆՕՐԵՆ՝

Կ.Տ.

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ